

108. ՄԱՐԹԻՆ ԾՈՐԱՎ ՉԸՆ ՄԻՆԱՆՁԻԼ

Մին հարուստ մարթու մին շատ ղաշանգյ կնեգյ ա ինում։ Մարթը տրա հետե միշտ թինգյանկան շորեր ա ինքյ օնում, ինքյը խուտուրու-մուտուրու կյենում։ Մին օր էլ կնեգյն ուրան ամենալավ շորերը կյենում ա, տունա կյամ հիլուն առաջը, մարթին ծեն տամ կոշտը, ասում.—Ա՛ մարթ, մին հիլուն մաչին եշի, ինձ էլ տրես, քեզ էլ, մունք ուրուր սազում ը՞նք, ուրուր լայաղ ը՞նք, թա՝ չէ։ Մարթն ասում ա.—Ա՛ կնեգյ, ես հինչ ըմ՞, տու մին թաքուհի յրա, ես՝ քու քշտիտ մին նոքյար։ Կնեգյն ասում ա.—Ես օրիշ պեն չըմ ասում, ասքելրա էն ա, վրեր ես քեզ լայաղ չըմ։ Մարթը խոսում չի։

Մին օր էլ մարթը կյամ ա կնգանը կոշտը, ասում.—Դուքյանը կնգան լավ թինգյանկան շոր ա նկալ, դուքյանչուն ասալ ըմ, վրեր պահե, հինչ էլ օգում ա ինի, պիտի վրեմբրանքեն լոխ ծախրեմ, ինքյ օնրեմ, վրեր կյինը տունա չի կյա՛, տոնն էլ պիտի ծախրեմ, ես օգում ըմ, վրեր իմ կնեգյրա միշտ լավ շորու մաչի ինի, հանցու իմ աչկրեա միշտ ղաշանգյ ուրվա։ Կնեգյն ասում ա.—Վրեր իտի յա, թող մնա, կյրվող տարրեն ինքյ կօնրենքյ։ Մարթը թա՝ չէ, էտքան էրկան թողրել չըն, վրեր դուքյանումը կենա, պիտի մեհենգյ ամմրեն հինչ ծախրեմ, ինքյ օնրեմ։ Կնեգյը թա՝ չէ, ա մարթ, տոնն էլ վրեր ծախրես, մրզրրա կրծիծաղեն, տոնը թող կենա, վրեքրանքրեն նհրես իմ թինգյանկան շորքերը լոխ տար

բրգարումը ծախեմ, ետ կյանքիս ինքյ կալ, եք։ Մարթը թա՝ հա, իսի լավ ա, տու ինձանեմ խրելունք ըս մատանում։

Կնեգին ուրանն լավ-լավ շորքերը լոխ տամ ա մարթին, վըեր տանեմ ծախեմ, ինքյը մաշած, ճընթըռըմ շորեր ա կյենում, մարթին եշում, վըեր թազդա շորն ինքյ օնըն, պիրի։ Մարթն էլ քյինանմ ա վըխճըրնըեն զարկում սարը, մենակ կնգանը շորքերը տանում ծախում, ուրանն հետո լավ շորքեր, լավ շերքյնգկա փափաղ ինքյ օնում, լանգքրի փորմու զամանն էլ կոխկան կապում, ծիյին յիրանն նստում, կյամ տոն։ Կնեգյը ճինանչում չի։ Մարթն ասում ա.—Ա՛ կնեգ, եք ուրուր կոխկեն հանչ մին վըեննը կենանք, տըեսնանք ուրուր սազո՞ւմ ընք, թա՝ չէ։ Համ ասում ա, համ կնգանը կուռնան փռնում, պիրանմ հիլուն առաչը։ Կնեգյը վըեր կոխկըեն մինգյել հիլուն մաչին եշում ա, մարթին ասում ա.—Տու ինձ լայաղ չըս, տու մին թաքավըեր ըս, եա՝ մին անքյչի։ Մարթը թա՝ գե վըեր ես քեզ լայաղ չըմ, փալաղ-մալաղըտ հըվանքն, տանաս տուն եք։